

Չանովսկին ընդդեմ Լեհաստանի (Janowski v. Poland), 1999, Application no. 25716/94, Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Թեմա՝ անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում
Թեսթ՝ միջամտությունն արդարացնող պատճառների «վերաբերելիությունը և համաչափությունը»
ՄԻԵԴ՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել
Իրավասություն՝ ՄԻԵԴ, Լեհաստան

Փաստական հանգամանքներ

Դիմումատուն լրագրող է: Դիմումատուի խոսքերով, նա նկատել է, որ փողոցում քաղաքապետարանի աշխատողները կարգադրել են փողոցային վաճառականներին դադարեցնելու փողոցային առևտուրը և տեղափոխվելու մոտակա գործող շուկան: Կառավարությունն էլ իր հերթին պնդում է, որ քաղաքապետարանի աշխատողները միջամտել են սանիտարական և տրանսպորտի նկատառումներից ելնելով և ընդամենը խնդրել են փողոցում առևտրով զբաղվողներին իրենց առևտուրը կազմակերպել շուկայում:

Դիմումատուն էլ իր հերթին հավելում է, որ ինքը միջամտել է, տեղեկացրել աշխատողներին, որ իրենց գործողությունները գուրկ են իրավական հիմքերից: Նա նշել է, որ քաղաքապետարանը որևէ որոշում չի կայացրել արգելելու փողոցային առևտուրը:

Միջադեպից հետո քրեական վարույթ հարուցվեց դիմումատուի դեմ: Դիմումատուն մեղադրվում էր քաղաքապետարանի աշխատողներին վիրավորելու, վերջինների աշխատանքը խոչընդոտելու մեջ:

Տեղական դատարանը դատապարտեց դիմումատուին քրեական օրենսգրքի խուլիգանության հոդվածի հատկանիշներով: Դատարանը դատապարտեց դիմումատուին ութ ամսվա ազատազրկման և պարտավորեցրեց վճարել տուգանք:

Դիմումատուն գործը բողոքարկեց վերաքննիչ դատարան: Նա իր վերաքննիչ բողոքում պնդում էր, որ իր մեղադրանքը հիմնվել է ոչ բավարար ապացույցների վրա: Նա նշում էր, որ առաջին աստիճանի դատարանը գտել է, որ դիմումատուն աշխատողներին անվանել է «անտեղյակներ»: Տվյալ բառը չպետք է ընկալել որպես վիրավորանք, այլ որպես ընդունելի քննադատություն ուղղված պետական ծառայողներին: Դիմումատուն բողոքարկում էր նաև, որ իր գործողությունները չեն պարունակել խուլիգանության հանցակազմ:

Վերաքննիչ դատարանը իջեցրեց տուգանքի չափը և գտավ, որ դիմումատուի գործողությունները խուլիգանություն չեն հանդիսացել: Վերաքննիչ դատարանն ընդունեց նաև, որ քաղաքապետարանը որևէ իրավական ակտ չի ընդունել փողոցային առևտուրն արգելելու վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը նկատեց, որ վճռում դատարանը չի նշել վիրավորանք պարունակող բառերը, որոնք հնչեցվել էին դիմումատուի կողմից: Այնուամենայնիվ, այն գտավ, որ դատական գործում առկա են հիմնավոր ապացույցներն այն մասին, որ դիմումատուն վիրավորել է աշխատողներին: Դատարանը գտավ, որ կիրառված պատիժն արդարացի է եղել

քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը կիրառելու առումով, որի նպատակն է քաղաքացիական ծառայողների աշխատանքին չմիջամտելը:

ՄԻԵԴ-ի վերլուծությունն ու եզրակացությունը.

Պարուն Ջանովսկին իր դումումում պնդում է, որ քաղաքապետարանի աշխատողներին վիրավորելու համար կիրառված պատիժը խախտել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված իր իրավունքները:

Միջամտությունը

Կողմերն ընդունում են, որ դիմումատուի բանտարկությունը հանդիսացել է միջամտություն իր խոսքի ազատության իրավունքի նկատմամբ:

Միջամտությունը հակասում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածին, բացառությամբ, եթե այն «նախատեսված է օրենքով», հետևում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված օրինական նպատակին կամ նպատակներին և «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» նման նպատակին կամ նպատակներին հասնելու համար:

«Օրենքով նախատեսված»

ՄԻԵԴ-ը գտնում է, որ միջամտությունը նախատեսված է եղել քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով:

«Օրինական նպատակ»

Հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները և վերաքննիչ դատարանի վճիռը, ՄԻԵԴ-ը գտնում է, որ դիմումատուի դատավճիռն ունեցել է օրինական նպատակ՝ այն է անկարգությունների կանխումը: Այդ պատճառով, միջամտությունը հետապնդել է 10 § 2 ամրագրված նպատակը:

«Անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»

ՄԻԵԴ-ի գնահատումը

ա/ Ընդհանուր սկզբունքներ

«Արտահայտվելու ազատությունը, երաշխավորված 10-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ, ժողովրդավարական հասարակության առանցքային հիմնասյուներից է եւ նրա առաջընթացի, ինչպես նաեւ յուրաքանչյուր անհատի ինքնադրսեւորման հիմնական պայմաններից մեկը: Պայմանով, որ այն համապատասխանում է 2-րդ պարբերության սահմանափակումներին, այս ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում են անվնաս, այլեւ այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ, ցնցող

կամ անհանգստացնող են: Դա է բազմակարծության, հանդուրժողականության եւ լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»: Խոսքի ազատությունը ենթակա է մի շարք սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է նեղ մեկնաբանվեն և ցանկացած սահմանափակման անհրաժեշտությունը պետք է սահմանված լինի համոզիչ կերպով:

բ/ Նշված սկզբունքները չափազանց կարևոր են, եթե հարցը վերաբերում է մամուլին: Թեև մամուլը չպետք է անցնի ընդունված սահմանները, որոնց թվում են «ազգային անվտանգության շահերը», «դատարանի հեղինակության պահպանումը», այն պարտավոր է ներկայացնել հանրային շահին առնչվող տեղեկություններ և գաղափարներ: Հասարակությունն էլ իր հերթին իրավունք ունի դրանք ստանալ: Այլ պարագայում մամուլը կզրկվեր «հանրային հսկիչի» իր առաքելությունից:

գ/ Իր վերահսկողական դերն իրականացնելիս ՄԻԵԴ-ը նպատակ չունի զբաղեցնել իրավասու ներպետական մարմինների տեղը. այն լուր վերանայում է նրանց կողմից ընդունված որոշումները: Դա չի նշանակում, որ վերահսկողությունը սահմանափակված է հավաստիանալու միայն, որ պատասխանող պետությունն իր հայեդեցությունն իրականացնում է ողջամիտ կերպով, նրբանկատորեն և բարեխղճորեն: ՄԻԵԴ-ը պետք է միջամտությունը դիտարկի գործի բոլոր հանգամանքերը համադրելով և որոշի, թե արդյոք այն «համաչափ է եղել օրինական նպատակին» և արդյոք միջամտությունը հիմնավորելու նպատակով ազգային մարմինների ներկայացրած պատճառներն «վերաբերելի են և բավարար»:

Վերը թվարկված սկզբունքների կիրառումը գործի նկատմամբ

ՄԻԵԴ-ի խնդիրն է որոշել, թե պարոն Ջանովսկիի խոսքի ազատության սահմանափակումներն ունեցել են արդյոք «գերակա հանրային շահ» և «համաչափ են եղել օրինական նպատակին» և ազգային մարմինների կողմից բերված պատճառները եղել են արդյոք «վերաբերելի և բավարար»:

ՄԻԵԴ-ը գտնում է, որ դիմումատուն վիրավորական բառերը տեղացել է փողոցում, ուր գտնվել են բազմաթիվ ականատեսներ: Այդ պատճառով, դիմումատուի ականարկները չեն հանդիսացել հանրային շահ ներկայացնող բաց քննարկման մասը: Դրանք առնչություն չունեն նաև մամուլի ազատության հետ, քանի որ դիմումատուն թեև լրագրող է, սակայն սովյալ միջադեպում հանդես է եկել որպես անհատ:

ՄԻԵԴ-ը գտնում է նաև, որ դիմումատուի կողմից երկու բառերի արտաբերումը, որոնք որակվել են վիրավորական ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանների կողմից, չի դիտարկվում որպես աշխատողների հասցեին արտահայտված քննադատական կարծիք: Այդ առումով ՄԻԵԴ-ը չի ընդունում դիմումատուի այն պնդումը, որ պետության նպատակը գրաքննությունը և խոսքի ազատ արտահայտությունը զսպելն էր:

ՄԻԵԴ-ը գտնում է նաև, որ քաղաքացիական ծառայողներն ինչպես քաղաքական գործիչները ենթակա են ավելի մեծ քննադատության: Սակայն չի կարելի ասել, որ քաղաքական գործիչները միտումնավոր կերպով բաց են հասարակության քննադատությանն իրենց

արտաբերած յուրաքանչյուր բառի կամ գործողության առումով, այնքանով որքանով քաղաքական գործիչները:

Քաղաքացիական ծառայողները պետք է վայելեն հասարակության վստահությունը և ազատ լինեն անհարկի ճնշումներից իրենց պարտականություններն արդյունավետ կերպով իրականացնելու համար: Այդ պատճառով, անհրաժեշտ կարող է համարվել աշխատանքի ընթացքում նրանց պաշտպանելը վիրավորական հարձակումներից: Նշված դեպքում պաշտպանության պահանջները չեն չափվում մամուլի ազատության կամ հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի բաց քննարկման շահերի առնչությամբ, քանի որ դիմումատուի արտահայտությունները չեն տեղացել նման ենթատեքստում:

ՄԻԵԴ-ը գտնում է, որ դիմումատուի մեղադրանքը վերաբերելի է: Դիմումատուն վիրավորել է քաղաքապետարանի աշխատողներին հասարակական վայրում, երբ նրանք իրականացնում էին իրենց պաշտոնական պարտականությունները:

Եզրակացություն

Միեդ-ը գտնում է, որ միջամտությունն արդարացնող պատճառները «վերաբերելի են և համաչափ»: Միջամտությունը հետապնդել է օրինական նպատակ:

ՄԻԵԿ-ի 10-րդ հդվածի խախտում տեղի չի ունեցել: